

**Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն** թիվ 4(17/18)  
**Ռադիոֆիզիկայի ֆակուլտետի խորհրդի 15.02.2018թ.կայացած նիստի**

Խորհրդի նիստին մասնակցում էին նրա 36 անդամներից 28-ը :

Օրակարգ`

1. «Գիտափորձի ավտոմատացում և մոդելավորում» մասնագիտացման մագիստրատուրայի ծրագրերի հեռանկարների քննարկում:  
*Չեկ՝ դեկան Խ.Վ. Ներկարարյան*
2. ՊՆ համակարգը մասնագիտացված կադրերով համալրելու ուղղությամբ կատարված աշխատանքների քննարկում:  
*Չեկ՝ դեկան Խ.Վ. Ներկարարյան*  
*Ա.Հ. Մակարյան*
3. 2017-2018 ուս.տարվա երկրորդ կիսամյակում անվանական կրթաթոշակների թեկնածությունների առաջադրման հարցը:
4. Ընթացիկ հարցեր:

***Օրակարգի 1-ին հարցի կապակցությամբ.***

***Լսեցին-*** ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան, պրոֆ. Խ.Վ.Ներկարարյանը ներկայացրեց «Գիտափորձի ավտոմատացում և մոդելավորում» մասնագիտացման մագիստրատուրայի ծրագրերի հետ կապված նախնական որոշակի առաջարկություններ: Այս ուղղությունը ժամանակակից է և ունի մեծ պահանջարկ մագիստրատուրայում ուսումը շարունակող ուսանողների կողմից: Կարևորվեց նաև այդ ուղղությամբ դասավանդման ծրագրերի վերաբերյալ անընդհատ քննարկումներն ու հետևողական ուսումնասիրումը և՛ մեթոդական խորհրդում, և՛ գիտական խորհրդում:

***Որոշեցին-*** Տեղի ունեցավ քննարկում և հաղորդումն ընդունվեց ի գիտություն:

***Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ.***

***Լսեցին-*** ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան, պրոֆ. Խ.Վ.Ներկարարյանը ներկայացրեց ՊՆ համակարգում առկա ուսումնական գործընթացը: Ելույթ ունեցավ ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնի դոցենտ Ա.Հ.Մակարյանը: Ելույթում մանրամասն ներկայացվեց ՊՆ համակարգով սովորող ուսանողների խմբերը, ուսումնական պրոցեսի ընթացքը, ինչպես նաև 4-րդ կուրսում սովորողների հետագա անելիքները: Ա.Հ.Մակարյանը ծանոթացրեց նաև ավարտելուց հետո աշխատանքի ընդունման և ծառայության անցնելու կարգը:

***Որոշեցին-*** Հաղորդումն ընդունել ի գիտություն:

**Օրակարգի 3-րդ հարցի կապակցությամբ.**

**Լսեցին-** ֆակուլտետի 2017/2018 ուս.տարվա 2-րդ կիսամյակում անվանական կրթաթոշակների թեկնածությունների առաջադրման հարցը

**Արտահայտվեցին-** ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Խ.Վ. Ներկարարյանը, ԱՊՏՖ ամբիոնի վարիչ Գ.Բ. Ալավերդյանը, Կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի վարիչ , ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ.Մ. Հարությունյանը:

**Որոշեցին-** Հաշվի առնելով ուսման գերազանց առաջադիմությունը և գիտահասարակական ակտիվությունը՝ անվանական կրթաթոշակ ստացող ուսանողներին թողնել անփոփոխ .:

**Էմիլ Միրզաբեկյանի անվան կրթաթոշակ**

1. Ստեփանյան Դավիթ Զրաչի– մագիստրատուրա, 2-րդ կուրս

**Ալիխանյան եղբայրների անվան կրթաթոշակ**

2. Ղազարյան Գագիկ Արամայիսի- մագիստրատուրա, 2-րդ կուրս

**Յուրի Բախշյանի անվան կրթաթոշակ**

3.Գրիգորյան Տիգրան Օլեգի– մագիստրատուրա, 2-րդ կուրս

**Յակոբ Զարոբյանի անվան կրթաթոշակ**

4.Ներսիսյան Դավիթ Վարուժանի – մագիստրատուրա, 2-րդ կուրս

**Օրակարգի ընթացիկ հարցերում**

**Լսեցին-** - «Ա 04.03 – Ռադիոֆիզիկա» մասնագիտությամբ, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի հեռակա ուսուցմամբ 1-ին տարվա ասպիրանտ **Միհրան Սուրենի Պողոսյանի** թեկնածուական թեզի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

**Որոշեցին-** 1) ասպիրանտ **Միհրան Սուրենի Պողոսյանի** թեկնածուական թեզի թեման հաստատել հետևյալ ձևակերպմամբ՝ «5G IoT (սարքերի ինտերնետ) տեխնոլոգիայի վրա հիմնված տվիչների ցանցեր»:

2) ասպիրանտի գիտական ղեկավար հաստատել “ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության” ամբիոնի պրոֆեսոր, ֆ.մ.գ.դ. ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ **Ա.Ա. Հախումյանին**:

**Լսեցին-** - «Ա 04.03 – Ռադիոֆիզիկա» մասնագիտությամբ, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի հեռակա ուսուցմամբ 1-ին տարվա ասպիրանտ **Լևոն Արամի Օդաբաշյանի** թեկնածուական թեզի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

**Որոշեցին-** 1) ասպիրանտ **Լևոն Արամի Օդաբաշյանի** թեկնածուական թեզի թեման հաստատել հետևյալ ձևակերպմամբ՝ «Ջերմային և էլեկտրամագնիսական դաշտերի բաշխվածությունների արտապատկերումը ջերմաառաձգական օպտիկական մանրադիտակով»:

2) ասպիրանտի գիտական ղեկավար հաստատել «ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության» ամբիոնի դոցենտ, ֆ.մ.գ.դ. **Ա.Ժ. Բաբաջանյանին**:

**Լսեցին-** - «Ե. 27.01 – Էլեկտրոնիկա, միկրո և նանոէլեկտրոնիկա» մասնագիտությամբ, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի հեռակա ուսուցմամբ 1-ին տարվա ասպիրանտ **Անի Հրաչի Սալմասյանի** թեկնածուական թեզի թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը:

**Որոշեցին-** 1) ասպիրանտ **Անի Հրաչի Սալմասյանի** թեկնածուական թեզի թեման հաստատել հետևյալ ձևակերպմամբ՝ «**Եռաչափ տրանզիստորներով պրոցեսորային ինտեգրալ սխեմաների նախագծման միջոցների մշակումը և հետազոտումը**»:

2) ասպիրանտի գիտական ղեկավար հաստատել, Սինոփսիս Արմենիա ՓԲԸ ուսումնական դեպարտամենտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, տ.գ.դ., պրոֆեսոր **Վ.Շ. Մելիքյանին**:

**Լսեցին-** Ֆակուլտետի գիտ. խորհրդի 2017/2018 ուս.տարվա 2-րդ կիսամյակի աշխատանքային պլանի քննարկումը և հաստատումը:

**Արտատայտվեցին.-** Տեղի ունեցավ քննարկում, որին մասնակցեցին ֆակուլտետի ղեկան, պրոֆեսոր Խ. Վ. Ներկարարյանը, պրոֆեսորներ Գ.Ս.Հաջանն ու Յու.Հ.Ավետիսյանը:

**Որոշեցին.-** Նախագծում հաշվի առնել կատարված առաջարկները և հաստատել աշխատանքային պլանը:

**Լսեցին.** ԳՊԿ-ի կողմից հայտարարած գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթին մասնակցելու համար ռադիոֆիզիկայի ֆակուլտետի Կ/Հ ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի ուսումնական լաբորատորիայի վարիչ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Մ.Ալեքսանյանի ներկայացրած «**Ուլտրամանուշակագույն ճառագայթների ազդեցությունը կիսահաղորդիչ-գազ սահմանին տեղի ունեցող ֆիզիկաքիմիական պրոցեսների վրա**» թեմայով հայտի երաշխավորման հարցը:

**Որոշեցին.-** Հաշվի առնելով թեմայի արդիականությունը և այդ բնագավառում Մ.Ալեքսանյանի ունեցած ձեռքբերումները՝ ներկայացված «**Ուլտրամանուշակագույն ճառագայթների ազդեցությունը կիսահաղորդիչ-գազ սահմանին տեղի ունեցող ֆիզիկաքիմիական պրոցեսների վրա**» թեմայով հայտը երաշխավորել դրական կարծիքով:

**Լսեցին.** ԳՊԿ-ի կողմից հայտարարած գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթին

մասնակցելու համար ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնի պրոֆեսոր, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Յու.Յ.Ավետիսյանի ներկայացրած **«Օպտիկական ուղղման միջոցով մեծ սպեկտրալ լարքավորմամբ տերահերցային ալիքային փաթեթի գեներացումը արհեստական քվազիփուլահամաձայնեցնող կառուցվածքներում»** թեմայով հայտի երաշխավորման հարցը:

*Որոշեցին.* Հաշվի առնելով թեմայի արդիականությունը և այդ բնագավառում Յու.Յ.Ավետիսյանի ղեկավարությամբ աշխատող գիտական խմբի ձեռքբերումները՝ ներկայացված **«Օպտիկական ուղղման միջոցով մեծ սպեկտրալ լարքավորմամբ տերահերցային ալիքային փաթեթի գեներացումը արհեստական քվազիփուլահամաձայնեցնող կառուցվածքներում»** թեմայով հայտը երաշխավորել դրական կարծիքով:

*Լսեցին.* ԳՊԿ-ի կողմից հայտարարած գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթին մասնակցելու համար ռադիոֆիզիկայի ֆակուլտետի Կ/Հ ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոնի ավագ գիտաշխատող, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Հ.Լ.Մարգարյանի ներկայացրած **«Բազմաշերտ հեղուկ բյուրեղային օպտիկական սարքերում օգտագործման նպատակով որոշակի բնութագրերով գրաֆենի ստացման տեխնոլոգիայի մշակում»** թեմայով հայտի երաշխավորման հարցը:

*Որոշեցին.* Հաշվի առնելով թեմայի արդիականությունը և այդ բնագավառում Հ.Լ.Մարգարյանի ղեկավարությամբ աշխատող գիտական խմբի ձեռքբերումները՝ ներկայացված **«Բազմաշերտ հեղուկ բյուրեղային օպտիկական սարքերում օգտագործման նպատակով որոշակի բնութագրերով գրաֆենի ստացման տեխնոլոգիայի մշակում»** թեմայով հայտը երաշխավորել դրական կարծիքով:

*Լսեցին.* ԳՊԿ-ի կողմից հայտարարած գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով գիտական թեմաների հայտերի ընտրության մրցույթին մասնակցելու համար ռադիոֆիզիկայի ֆակուլտետի ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնի դոցենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր Ա.Ժ.Բաբաջանյանի ներկայացրած **«Նանոհամակարգերից լուսային ազդանշանի արձագանքը և դաշտերի բաշխվածությունների արտապատկերումը ջերմաառաձգական օպտիկական մանրադիտակով»** թեմայով հայտի երաշխավորման հարցը:

*Որոշեցին.* Հաշվի առնելով թեմայի արդիականությունը և այդ բնագավառում Ա.Ժ.Բաբաջանյանի ղեկավարությամբ աշխատող գիտական խմբի ձեռքբերումները՝ ներկայացված **«Նանոհամակարգերից լուսային ազդանշանի արձագանքը և դաշտերի**

**բաշխվածությունների արտապատկերումը ջերմաառաձգական օպտիկական մանրադիտակով»** թեմայով հայտը երաշխավորել դրական կարծիքով:

*Օրակարգը սպառված է:*

*Խորհրդի նախագահ,  
Ֆ.Վ.Գ.Ք. պրոֆեսոր*

**Խ.Վ.Ներկարարյան**

*Գիտքարտուղար*

**Յ. Ա. Շահինյան**